նում մեր բանաստեղծութեան համար, որովհետև նրանից առաջ, ինչպէս կը տեսնենք, ուրիշները նոյնն արդէն երգել են աւելի դեղեցիկ և ուժեղ կերպով: Մխիթարեան վարդապետն ուշացել է և նա իւր «արիենի Մխիթարի» տաղերգութեամբ 1843 թուին, միայն թոյլ արձագանք է տալիս ուրիշների երգածին և սրբացնում Մխիթարին: Թոմաճեանը ոչ նիւթի և ոչ ձևի ստեղծող է, նա չէր կարող ուղղութիւն տալ մեր դրականութեանը:

Մ. Աբեղեան

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

Ալէքսանդրապոլի Փոխանորդի ուղղած Պետերբուրգի եկեղեցական խորհրդին եւ Բ. Հ. Կուլտուրական Միութեան իւր վիճակի դպրոցական դրութեան մասին.

Ցանձն առնելով երկրորդ անգամ Ալէքսանդրապոլի ընդարձակ վիճակի փոխանորդի պատասխանատու պաշտօնը, ես միայն մի նպատակ ունէի, իմ ուժերը ներածի չափ օգտակար լինել այդ վիճակի բազմաթիւ կարիքները գէթ մասամբ թեթևացնելու:

Ալէքսանդրապոլի վիճակն իր 160 հազար հայ ազգաբնակութեամբ մի քաղաքով և 125 հայ գիւղերով ներկայացնում է վերին աստիճանի անմխիթար դրութիւն. վերջին տարիների անբերրիութիւնից, կարկտից, երաշտից առաջացած աղքատութիւնը քայքայել է ժողովրդին, հիւծել և մաշել է նրան նիւթապէս և բարոյապէս: Զխօսելով Ալէքսանդրապոլ քաղաքի մասին, որն իր մէջ պարունակում է բազմազան պարապմունքներով զբաղուող հարուստ և աղքատ ընտանիքներ, ես ցանկանում եմ

երկտողով ծանօթացնել 125 հայ գիւղերի ազգաբնակութեան դրութեան հետ:

Պատմական Ճիրակի արևելեան բաժինը, որ կազմում է Ալէքսանդրապօլի փոխանորդութիւնը, համեմատած իր ազգաբնակութեան թուին (միայն հայերի թիւը հասնում է 125 հազարի) տեղաւորուած է խիստ սահմանափակ տարածութեան վրա: Իմ ժողոված վիճակագրական տեղեկութիւններից երևում է, որ այդքան խոշոր ազգաբնակութիւնը վարուցանքի համար ունի ոչ աւելի քան 130000 դեսեատին տարածութիւն, միջին հաշուով իւրաքանչիւր շնչին դալիս է մօտ մի դեսեատին: Ծաք և Ջրաբրի տեղերում, ինչպէս օրինակ Արաքսի հովտում, Երևանեան դաշտում, կամ Գանձակի տափարակներում այդ քան վարելահողը թերևս կկարողանար մասամբ բաւարար սնունդ մատակարարել ընտանիքին, որովհետև այն տեղերում ջրելու, պարարտացնելու յարմարութիւն կայ, և մի դեսեատին հողի վրա ցանելով 12-15 փ. ցորեն, տալիս է 8-10 անգամ աւելի՝ 100-150 փութ, իսկ եթէ բամբակ, քնջիթ կամ չալթուկ (բրինձ) են ցանում, իւրաքանչիւր դեսեատինը զուտ օգուտ տալիս է 120-200 ռուբլի: Մինչդեռ Ալէքսանդրապօլի վիճակում, ջրի սակաւութեան պատճառով, բոլոր վարելահողերը անջրդի են և տալիս են ամենայաջող տարին մէկին 5–6, բայց միջին հաշուով 4, որից մէկը դուրս գալով սերմացուն, մէկը վարի և այլ աշխատանքը, գիւղացին ստանում է մի դեսեատին վարելահողից ամենաշատը 20-30 փութ ցորեն իր մնացած պէտքերը հոգալու համար: Աւելացրէք սրա վրա յաճախ կրկնուող երաշտը, կարկուտը, իսկ սար տեղերում՝ մրսելը, պատկերը կատարեալ կլինի: Եւ յիրաւի ով շրջագայել է վերջին 10-ամեակում արևելեան Ճիրակի գիւղերը, նա չի կարող տեսած չլինել այն աղքատիկ, խեղճ ողորմելի, կացութիւնը, ինչ որ ունեն յիշեալ գիւղերի բնակիչները: Աղքատութիւնը, անբերրիութիւնն պատճառ լինելով սննդի պակասութեան, գիւղացին դարձել է մտաւոր աշխատանքի անընդունակ, անտարբեր, վատոյժ

և հասել է անասնական դրութեան։ Իմ շրջագայութեան ժամանակ ես դիւղերում չեմ պատահել զուարթ, կենսուրախ առոյգ մարդկանց, այլ ընկճուած, վախկոտ դլուխը կախ և մտահոգ։ Այո՛, նա մտահոգ է, որովհետև ամեն տարի սովի ուրուականը դամոկլեսն որի պէս կանգնած է նրա դլխի վրա։

Շատ բնական է, որ նիւթական այսպիսի պայմաններում ժողովրդին զբաղեցնում է միայն ստամոքսի խնդիրը, իւր ֆիզիկական գոյութիւնը մի կերպ պահելու հարցը և նա չի զբաղւում որևէ հասարակական խնդրով կամ մտաւորի հարցով։ Ամբողջ արևելեան Շիրակում չկայ և չի եղել հնումն էլ բարեկարգ դպրոցներ, այդ պատճառով ազգաբնակութեան 90%-ը անդրագէտ է։ Իբրև օազիս այս մտաւոր անապատում մի ժամանակ փայլել է Հառիճի (Ղփչաղի) վանական 4 դասարանեան միջնակարգ դպրոցը, բայց այս էլ եղել է ոչ դիւղացիների, այլ Սվէրանդրապոլի մի քանի քաղաքացիների ջանքերով։ Սակայն նա էլ այսօր նիւթական նեղ կացութեան շնորհիւ իջել է իր բարձրութիւնից և դարձել է մի խեղճ ուսումնարան։

Թէև, երբ երկու տարի առաջ եկեղեցական–ծխական դպրոցների դռները լայն բացուեցին մեր առաջ, մենք Կովկասի հայերս մեծ ոգևորութեամբ ընդունեցինք և վճռեցինք օգտուել այդ իրաւունքից, սակայն դժբաղդաբար պիտի խոստովանենք, որ այդ ոգևորութիւնը միայն ինտելլեգենտ, քաղաքներում բնակուող անհատների մէջ էր և ոչ բուն ժողովրդի, որն այս երկու տարում ոչնչով չի օգտուել այդ իրաւունքից և չէր կարող օգտուել վերոյդրեալ պատճառներով։

Ի մասնաւորի խօսելով իմ վիճակի մասին կասեմ, որ ամբողջ վիճակումս չկայ դէթ մի ուսումնարան, որ ընդարձակ մտքով ամփոփէր այդ իմաստը իւր մէջ։

Ես ինձ իրաւունք չեմ համարիլ ասել, որ դիւղական ազգաբնակութիւնը իսպառ քարացել է կամ բուսական կեանքը համարում է իր կէտ նպատակը, ոչ, նրա

մէջ կենդանութեան նշոյլներ երևում են, իմ մի քանի փորձերը պսակուեցին յաջողութեամբ, մի քանի գիւղեր բացին միդասեան դպրոցներ, բայց այդ մի քանի դպրոցներն իրանց խղճուկ կացութեամբ նման են մի քանի կաթիլի ովկիանոսի մէջ. կարիքն այնքան մեծ է և գիւղական ազգաբնակութեան անկարութիւնն այնքան զօրեղ, որ ես, իբրև նրանց ցաւերը դիտող և դարման մտածող, ստիպուած եմ ձեռք կարկառել այն հաստատութիւններին և անձանց, որոնց համար հայ ժողովրդի մտաւոր կարողութեան բարձրացումն թանկ արժէ, որից մեծ մասամբ կախուած է լինելու նաև նրանց տնտեսական բարեկեցութիւնը:

Թէ ինչ դրութեան մէջ է դպրոցական գործը ինձ հաւատացած վիճակում յարգելի խորհուրդդ կարող է դաղափար կազմել սրա հետ ուղարկածս վիճակագրական տեղեկութիւններից: Այդ պատկերից ակնյայտնի երևում է, որ Ալէքսանդրապոլի ընդարձակածաւալ և բազմահայ փոխանորդութեան մէջ գոյութիւն ունի 19 դպրոց, որոնցից բացի Մեծ-Ղարաքիլիսայի երկդասեան երկսեռ դպրոցից, ուրիշ կանոնաւոր դպրոց չկայ. եթէ ընդունենք և Համամլուի, Նորաշէնի, Ղփչաղի (Հառիճոյ վանքի), Խլի-Ղարաքիլիսայի և Ղշլաղի դպրոցներն իբրև բարեկարգուող դպրոցներ, որոնք ունեն գոնէ մի մի դպրոցաւարտ ուսուցիչներ, այն ժամանակ ամբողջ 125 գիւղում կունենանք մի բարեկարգ, 5 տանելի և 13 անբարեկարգ դպրոցներ: Այս բոլոր 19 դպրոցներում սովորում են ընդամէնն 1268 տղայ և 241 աղջիկ: Ծոկոսների վերածելով կգտնենք, որ արական սեռից արական ազգաբնակութեան միայն 2%-ը, իսկ իգական սեռից միայն 0, 4% դպրոց է յաճախում, բայց ի նկատի ունենալով, որ 13 դպրոցների ղեկավար ուսուցիչները դեռ իրանք կարօտ են ուսանելու, այն ժամանակ դպրոցների տուած օգուտն էլ աւելի կպակասի: Թիւրիմացութիւնների աեղիք չտալու համար պարտք եմ համարում յայտնել, որ վիճակիս հայաբնակ մասերում կայ ընդամենը 6 պետական դպրոց, ուր սովորողների թիւը

6-7 հարիւրի չի հասնում երկու սեռից, էլ չեմ ասում, որ նրանք էլ ըստ ուսումնականի, շատ մխիթարական օգիներ չեն ներկայանում:

Խօսելով ուսումնականի անմխիթար դրութեան մասին, չպիտի մոռանալ և դպրոցական շէնքն ու ուսումնական այլ պիտոյքները. մի դասեան դպրոցները իսպառ զուրկ են քիչ թէ շատ յարմարաւոր շէնքից. բացառութիւն կազմում են Մեծ-Ղարաքիլիսան, Մ.-Արխվալին, Հառիճը, Նորաշէնը, մնացածները համարեա հասարակ խղճուկ խրճիթներ են. իսկ ուսումնական պիտոյքներից բոլոր դպրոցները զուրկ են:

Այսպէս է իրողութիւնը. այս է վիճակիս դպրոցական դրութիւնը:

Միանգամայն համոզուած, որ առանց ուսման, կրթութեան ոչ մի հնարաւորութիւն չկայ հայ տարրը բարձրացնելու թէ բարոյապէս և թէ տնտեսապէս, իսկ այդ կարող է լինել դպրոցների միջոցով, ես թէ շրջագայութեանս ժամանակ և թէ շրջաբերական յորդորներով աշխատում եմ դրդել ինձ հաւատացած հօտին դէպի կրթական գործը, խրախուսելով և իմովսանն խոստանալով նպաստել դպրոցների բացման՝ լիայոյս, որ կարողաւոր անձինք և հաստատութիւններ կգան օգնելու ինձ հասարակական բարի գործ կատարելում:

Քիչ վերն ասացի, որ դիւղական ազգաբնակութիւնը չնայելով իր նիւթական թշուառ դրութեան, արձագանք է տալիս իմ կոչին, ցանկութիւն է յայտնում դպրոց բանալու, բայց որովհետև նա դպրոցի մասին գաղափար չունի, կարծում է թէ եթէ դրել կարդալ իմացող տիրացուն երբ մի քանի երեխայ ժողովեց ու գրագիտութիւն սովորեցրեց ուրեմն դպրոց ունեցած կլինեն, իսկ երբ լսում է, որ դպրոցի կանոնաւոր օգտակարութեան համար անհրաժեշտ է որոշ կրթական պատրաստութեան տէր անձն դասատու լինի, իսկ այդպիսին 180-150 ռուբլիով չի կարելի ձեռք բերել, նա դառն հոգւոց քաշելով հարկադրուած է լինում դպրոցի մտքից հրաժարուել,

որովհետև իր նիւթական դրութիւնը չի ներում այդչափ խոշոր ծախքեր անել:

Նկարագրելով ներկայ կացութիւնն ու գնելով ասածներս հաստատող վիճակագրական տեղեկութիւնները, թոյլ եմ տալիս ինձ մի քանի խօսք ասել այն ծրագրի մասին, որ ցանկալի է իրագործուած տեսնել ինձ հաւատացած վիճակում:

Ես հեռու եմ այն մտքից, թէ երբ գիւղերում ունենանք շատ միդասեան դպրոցներ 2–4 տարուայ դասընթացով, կարելի է գիւղական կանգնած կեանքը շարժել և բարձրացնել. իմ 23 տարուայ հասարակական փորձը ցոյց է տուել, որ գիւղացի երեխան 8-12 տարեկան հասակում գրել կարդալ ու հաշուել սովորելով չի կարող օգտուել նրանից կեանքի մէջ. բազմաթիւ օրինակներ կան, որ այդպիսի սովորողները ի վերջոյ դարձել են անպրագէտ, պահելով իրանց յիշողութեան մէջ միայն դպրոցական կեանքի մի քանի էպիզօդներ: Նատ առաջ այդքան տարուայ ուսումն էլ բաւական էր երեխային ապագայ տիրացու և գիւղի մէջ գրագէտ լինելու համար, որովհետև հին ժամանակ խալիֆաները հէնց սկզբից երեխայի ձեռքը տալով եկեղեցական գրքեր, վարժեցնում էին նրան, որի ընթերցանութիւնը հաճութեամբ լսում էին տանը երեխայի ծնողները և ստիպում նրան յետոյ էլ ազատ ժամանակները կարդալ ս. Գիրքը. այսպիսով երեխան սկզբում անգիտակցաբար, ապա աւելի գիտակցելով կարդում էր և ընթերցանութիւնը չէր մոռանում: Մինչդեռ այժմ երեխայի ձեռքի տալիս են գիւրըմբռնելի մանկական այբբենարան, որով չի հետաքրքրւում ծնողը. երեխան սովորելով և չունենալով իր ձեռքի տակ այլ գիւրամատչելի մանկական և ժողովրդական գրուածներ, դպրոցից յետոյ այլ ևս ոչինչ չի կարդում, որից աստիճանաբար մոռանում է ընթերցանութիւնը: Այդ պատճառով գիւղական միդասեան դպրոցների վրա յոյս դնել չի կարելի, այլ անհրաժեշտ է, որ իւրաքանչիւր շրջան, խումբ գիւղերի, ունենալով ամեն մէկում միդասեան դպրոցներ, ունենան կենդրոնական

երկդասեան–3ամեայ դասընթացով դպրոցներ, իսկ ամբողջ վիճակում գէթ մի երկու միջնակարգ դպրոցներ 8 տարուայ դասընթացով: Այսպիսի կազմակերպումն անհրաժեշտ է հետևեալ պատճառով. վիճակային դպրոցները մօտ լինելով ժողովրդին և գիւղական կեանքն աժան–գիւրաւնա իր զաւակը կուզարկի այնտեղ շարունակելու, բացի այդ, այնտեղ սովորելով գիւղացու զաւակները առանց քաղաքների ապականուած կեանքի հետ ծանօթանալու, ինչպէս այժմն է կատարւում մեզանում, սիրով կվերադառնան իրանց գիւղերը այնտեղ լոյս, գիտութիւն տարածելու և իրրև տեղացիներ աւելի մատչելի գներով յանձն կառնեն ուսուցչութիւնն: Այլ և կապուած լինելով իրանց սնուցանող դպրոցի հետ և յարմարութիւն ունենալով յաճախ այցելել իրանց Alma Mater ը, շարունակ նոքա թարմացած կվերադառնան գիւղ, տանելով իրանց հետ նաև ընթերցանութեան գրքեր: Երկդասեան դպրոցները աւելի փոքր շրջաններում նոյնպէս մեծ դեր կկատարեն. նախ՝ ուսման տեսակէտից, ապա և այն տեսակէտից, որ այդ դպրոցների ուսուցիչները հեշտութեամբ կարող են տօն օրերին ցրուել իրանց շրջանի գիւղերը երեկոյթներ, ներկայացումներ, դասախօսութիւններ սարքել և հասակաւորներին ու մանուկներին ոչ միայն օգտակար զուարճութիւն պատճառել, այլ և տնտեսապէս արձրացնելուն ձգտել: Անպայման շրջանային երկդասեան և վիճակային միջնակարգ դպրոցներում պիտի տեղական պայմաններին համապատասխան արուեստ մտցնել–կաթնատնտեսութիւն, մեղուաբուծութիւն, երկրագործութիւն, բանջարաբուծութիւն ևն. որպէս զի գիւղերում չստեղծուի ինտելլիգէնտ պրօլետարիատ, այլ այդպիսի ինտելլիգենցիան կարողանայ բարձրացնել գիւղացիութեան տնտեսական դրութիւնը:

Ահա այն ցանկութիւնը, որ կկամենայի իրականացած տեսնել Ալէքսանդրապօլի վիճակում: Բայց արդեօք հնարաւոր է այդ իրագործել, դա երազ չէ՞,

Անշուշտ, ամեն մի ծրագիր, ցանկութիւն եթէ թղթի

վրա ուրուագծելուց յետոյ այնտեղ էլ մնում է իբրև մեռած տառ, կեանքի համար երաշ է, բայց եթէ ջանք չի ինայւում, այն ժամանակ թէև դանդաղ, բայց և մի օր իրականանում է և տալիս իր խոշոր օգուտները:

Ալէքսանդրապոլի վիճակը այս ձևի խմբակցութեանց համար վերին աստիճանի յարմարութիւն է ներկայացնում լինելով զուտ հայաբնակ գաւառ և խիտ առ խիտ բնակեցրած գիւղերով: Սրա հետ ներկայացրած քարտէզն ու գիւղերի անուանացուցակն իրանց տների թուի հետ միասին յուսով եմ կդան հաստատելու իմ ասածները:

Բացառութեամբ մի քանի (մօտ 15) հայաբնակ գիւղերի, մնացածները այնքան խիտ են բնակեցրած, որ ոչ մի դժուարութիւն չկայ միդասեան գիւղական դպրոցը վերջացրած երեխային յաճախել շրջանային երկդասեան դպրոցները, իսկ վերջնից՝ վիճակային միջնակարգ դպրոցը:

Սրա հետ ուղարկած քարտէզից և ցուցակից պարզ երևում է, որ վիճակումն անհրաժեշտ է բանալ 92 դպրոց, որոնցից 2-ը միջնակարգ վիճակային, 18 երկդասեան և 72 միդասեան: Իսկ մանր գիւղերում, ուր անհնարին է անկախ միդասեան դպրոցներ պահել, կարելի է կազմակերպել շարժական նվեդական տիպի դպրոցներ:

Որպէս զի Ալէքսանդրապոլի վիճակը դպրոցների այդպիսի ցանցով պատուի, անհրաժեշտ է առ նուազն 242000 ռուբլի տարեկան մուտք, ինչպէս այդ երևում է կազմած և սորան կցուած նախահաշուից: Ո՞րտեղից գտնենք մեր ժամանակի, այս սովի ու քաղցի տարիներում այդ ահռելի գումարը:

Առաջին նուազ յիրաւի յուսահատական է այդպիսի գումարի առաջ կանգնելը, երբ վաղը գիտէք ձեր ձեռքում չի լինելու 200 կոպէկ. սակայն եթէ դպրոցական գործը կազմակերպուի, եթէ գիւղացուն կարելի լինի համոզել, 125 գիւղը շատ հեշտութեամբ կարող է տալ այդ գումարը առանց նոյն իսկ զգալու դրա ծանրութիւնը:

Ահա թէ ինչպէս.

Իմ վիճակագրական տեղեկութիւններից երևում է,

որ Ալէքսանդրապոլի վիճակում (բացի քաղաքը) կայ մօտ 125 հազար շունչ, որից իւրաքանչիւրը միջին թուով ունի 1 դեսեատին վարելահող: Եթէ իւրաքանչիւր մի դեսեատին վարելահողից գիւղացին յաջակցնի 1½ փութ ցորեն, մենք կստանանք 188000 փութ ցորեն, որ արժէ ընթացիկ գնով 225000 ռուբլի:

Այո՛, գիւղացին մէկէն չի կարող 10 կոպէկ տալ, այլ 1½ փութ ցորեն հեշտութեամբ կտայ: Միայն հարկաւոր է կազմակերպել, հասկացնել նրան այդ միջոցները: Բայց այսպիսի գիտակցութեան բերելու համար, մանաւանդ ներկայումս, երբ նրա մէջ զարգացել է վերին աստիճանի եսական ձգտում և մեռել է համայնական ձրգտումը, անհրաժեշտ է նրան ոգևորել դպրոցական գործով, որը դեռ նա համարում է մի շռայլութիւն և ոչ անհրաժեշտութիւն: Այս՛ այս պատճառով պիտի օգնութեան հասնեն առ այժմ այն կարողաւոր մարդիկ և հասարակութիւնները, որոնք դպրոցը համարում են կեանքի արհաւիրքների դէմ մաքառելու կարևոր գործօն:

Այս ցանկութիւնների իրականացումը տարիների գործ է, հետզհետէ պիտի աշխատել մտցնել գիւղական խաւարի մէջ, մինչ այդ, մեր սեպուհ պարտականութիւնն է օգտուել հանգամանքից և բանալ դպրոցներ, թեկուզ միդասեան, այն գիւղերում, որտեղ պատրաստակամութիւն և ցանկութիւն են յայտնում, բայց նիւթական միջոցներ չունեն (աւելի ճիշդ է ասել, դժուարանում են մեծ զոհաբերութիւն անել):

Զանձրացնելու չափ խօսելով վիճակիս ուսումնական կարիքների մասին և նեղութիւն պատճառելով Արդոյ անդամներիդ աչքի անցկացնել սրա հետ ներկայացրած վիճակագրական տեղեկութիւնս, ցուցակներն ու քարտէզը, ցանկութիւնս էր փաստօրէն պարզել մեծարգոյ Խորհրդիդ առաջ այն մեծ կարիքը, որ ունի հայութեան այս սիրտը, ուր 125000 շունչ խարխափում է խաւարի և տգիտութեան մէջ և խնդրել գոնէ տարեկան որոշ նպաստ հասցնել, որպէս զի ես հնարաւորութիւն ունենամ նախ

մի քանի տեղերում նոր գպրոցներ բանալ, մի քանի գիւղերի եղած գպրոցները կանոնաւոր հիմքերի վրա դնել և միւսներին զրկել դէպի ինքնօգնութիւն։

Միանգամայն հակառակ լինելով ժողովրդին ձրիակերութեան կամ մուրացկանութեան վարժեցնելուն, արդէն շրջաբերականներով և անձամբ յորդոր եմ կարդացել գիւղացիներին, որ եթէ իրանք գպրոցի ծախքերի մի մասը հոգան, իմ կողմից նպաստ կստանան, այսպիսի խոստումն ես արել եմ միանգամայն հաւատացած, որ իմ խնդիրն ու աղերսը անտես չի առնուիլ այն անձանց և հաստատութիւնների կողմից, որոնք և՛ միջոց ունեն և՛ բաւ հոգի, և՛ գիտակցութիւն։

Վերջացնելով գրութիւնս, կրկին աղերսում եմ օգնեցէք գիւղական խաւերը փարատելու գործին, որովհետև տգիտութիւնը իբրև բոլոր ազգաների մայր, քայքայում և կոչտեան է մատնում գիւղական ազգաբնակութեան։

Միանգամայն վստահ, որ խնդիրս ուշադրութեան կարժանանայ յարգելի Խորհրդից կողմից,

Լիայոյս մնամ Ձեր կենաց համար միշտ աղօթարար՝

Մատթէոս վարդապետ.

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

Տեղեկութիւնք Ալէքսանդրապոլի Փոխանորդութեան մէջ 1906—1907 ուսումնական տարում բացուած եկեղեցական ծխական հայոց դպրոցների։

Կազմած 1-ն Սեպտեմբերի 1907 ամի

Հ.	ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ	Քանակութիւն դպրոցների	Ազգաբնակութիւն		Ազգաբնակութեան աճեցողութիւնն առ 1000	Ո՞ր գիւղում է բացուած դպրոցը	Դպրոցում գտնուող աշակերտների թիւը	Բացման թուականը	Դպրոցի տեսակը
			Ար.	Իգ.					
1	Բօգեօխուշի	7	1696	1436	Միջին թուով աճեցողութիւնն հաւասար է 18 առ 1000	Ոչ մի գիւղում դպրոց չկայ:			
2	Զորլիի	14	4119	3704		Ոչ մի գիւղում դպրոց չկայ:			
3	Օրթաքիլիսայի	9	3378	2949		Ղռնախղռան	162	1906	արկ. միդաս.
						Մեծ Սարիար	97	1906	արկ. միդաս.
						Թոփաուլի	133	1906	արկ. միդաս.
						Նեբքին Ղանլ.	202	1906	արկ. միդաս.
4	Ջաջուռի	11	7225	6705		Ջաջուռ		1906	խառն միդաս.
						Դուզքենդ	255	1905	մի դաս արկ.
5	Մեծ-Պարնիի	11	7429	6622		Ոչ մի գիւղում ծխական դպրոց չկայ			
6	Համամլուի Մեծ	7	5028	4244		Համամլու	444	1905	դպրոցի
7	Ղարաքիլիսայի	9	6768	6027		Մեծ Ղարաք.	607	1905	երկդաս. աղ. և իգակ.
						Համզաչիման	292	1905	երկդ. խառն

Աշակերտների թիվը		Ի՞նչ միջոցներով է պահվում դպրոցը			Դրոցի տարեկան ծախքը			Ի՞նչ կրթական ցենզ ունի ուսուցիչը
Արական	Էգական	Մուտքի տեսակները	Ռ.	Կ.	Ելքի տեսակները	Ռ.	Կ.	
60	—	Թոշակներ	120	—	մի ուսչ. վարձ	120	—	տարր. կրթություն ունի
35	—	Թոշակներ	40	—	մի ուսչ. վարձ	40	—	տարր. կրթություն ունի
50	—	Թոշակներ	110	—	մի ուսչ. վարձ	110	—	տարր. կրթություն ունի
50	—	Թոշակներ	70	—	մի ուսչ. վարձ	70	—	տար. կրթություն ունի
120	6	Թոշակներ	200	—	երկ. ուսչ. վարձ	340	—	ուսուց. մինը Ներսիսեան դպ. 5-րդ դաս., միւսը՝ Ալ. քաղ. դպր.
		եկ. դր. % եւ այլ արդիւնք	200	—	այլ ծախքեր	60	—	
60	—	Թոշակներ	400	—	երկ. ուսչ. վարձ	360	—	ուսուց. մինը՝ Երեւ. Թեմ. գպր. 5-րդ. դաս. միւսը՝ Ալէք. քաղ. դպր.
					այլ ծախքեր	40	—	

մասին վիճակագրական տեղեկութիւնները պակասում են

164	147	Եկեղեցու	750	—	7 ուսուց. վարձ	3080	—	2-ն աւարտել են Ներսիսեան դպրոցը, 1-ը Եր. Թ. դպ. 1-ը ձմ. պդ. մասը, վարժուհիները Երեւ. Ալ. պրոգիմնազիան.
		արդ. եւ %%						
		ժողովրդ. տուրք	1200	—				
		Ն. Թայիրեանի կտակով	1500	—	այլ ծախքեր	550	—	
		եկ. դրամ %%	100	—	երկ. ուս. վարձ.	700	—	ուսուց. մինը աւ. է Եր. Թ. դպ., միւսը՝ Ալէք. քաղաքային դպրոց։
74	18	Թոշակներ	250	—				
		ժողովրդ. տուրք	400	—	այլ ծախքեր	50	—	

Հ. Յ. Ամ.	ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ	Ազգաբնակութիւն		Ազգաբնակութեան աճեցողութիւնը տարեկան 1000	Ո՞ր գիւղում է բացուած դպրոցը	Դպրոց բացուելու թուականը	Ամսաթիւ կարգադրութեան	Դպրոցի տեսակը
		Ար.	Իգ.					
					Ղշլաղ	154	1906	մի դաս. խառն
8	Նորաշէնի	12	4822	4559	Մեծ Արխվալի	186	1905	մի դաս. երկսեռ.
					Նորաշէն	125	1905	մի դաս. խառն
9	Արթիկի	10	6144	5579	Հառիճոյ վանք (որի մօտ է Ղփչաղ գիւղը)	85	1905	երկդ. խառն
					Բաշ գիւղ	129	1906	մի դաս. ար.
10	Հոռոմի	12	7251	6674	Խլի Ղարաքիլ.	430	1905	մի դաս. խառն

Միջին թուով աճեցողութիւնը 18 առ 1000

Աշակերտների թիւը		Ինչ միջոցներով է պահւում դպրոցը			Դպրոցի տարեկան ծախքը			Ինչ կրթական ցենզ ունի ուսուցիչը
Արական	Իգական	Մուտքի տեսակները	Ռ.	Կ.	Ելքի տեսակները	Ռ.	Կ.	
63	5	եկեղ. արդ. եւ դպր. %	130	—				
		Թոշակաղրամ	120	—	մի ուսուցչի			ուսուցիչն աւարտելէ
		ուխտադնաց.	50	—	վարձ	400	—	Ներսիսեան դպրոցը
		ժողովրդ տուրք.	150	—	այլ ծախքեր	50	—	
110	5	եկեղեց. մուտք	20	—	երկու ուսուցչի			ուս. մինը Ներս. դպ.
		վարելահողից	50	—	վարձ	280	—	3-րդ դաս. միւսը՝
		Թոշակներից	47	50	այլ ծախքեր	8	10	Ալ. ք. դպրոցից
56	8	Թոշակներից	100	—	երկու ուսուցչի			ուսուց. մինը՝ աւարտ.
		Տ. Աֆրիկեանից			վարձ	300	—	Էներս. դպրոցը. միւսը՝
		նպաստ տարեկ.	300	—	այլ ծախքեր	55	—	Մ. Արխվ. երկդ. դպր.
113	10	վարելահողից	525	—	չորս ուս. վարձ	985	—	ուսուց. մինը ճեմ. դպ. մէկը՝ Ալ. ք. դպ. մէկը՝
		Թոշակաղրամ	450		որդեգրաց եւ			Հառիճայ վիճ. դպ.. իսկ
		ԵՕՖվեր. պատկ.	1000		այլ ծախ.	920	—	միւսը՝ մասնաւոր կրթ.
52	—	եկ. ար. եւ %	160	40	մի ուս. վարձ	150	—	ուսուց. սով. է Հայոց
		վարելահողից	60		նստարաններ			երկդ. քաղ. դպրոցում
		Թոշակներ	150		եւ այլ ծախքեր	220	40	
97	23	Թոշակներ եւ վարելահողեր	410	—	երեք ուսց. վարձ	530	—	ուս. մինն աւարտել է Ներս. դպ. միւսը՝ Ալէք.
								քաղ. դպ. իսկ երրորդը՝
					այլ ծախքեր	55	—	Ալ. վիճակային դպ.

Հ. Հ. վիճակի ցուցակ	ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ	Գոյացեալ է գիւղի վրայ	Ազգաբնակութիւն Ար.	Ազգաբնակութիւն Իգ.	Միջին բերքի ցեղագրական աստիճանը 1000-ով	Ո՞ր գիւղում է բացուած դպրոցը	Դպրոցում գտնուող աշակերտների թիւը	Դպրոցը հիմնուած է թուականին	Դպրոցի տեսակը
						Դահաբլի	123	1906	մի դաս. խառն
						Հոռում	313	1905	մի դաս. խառն
11	Մահմուտճուղի	10	6438	5875	Միջին բերքի ցեղագրական աստիճանը 18 տա 1000	Մահմուտճուղ	242	1906	միգ. արական
12	Տաւշանդշատի	13	5310	4875		Բուղդաշէն	55	1905	միգ. արական
		125	65610	59288					

Մանչերի թիւը		Ի՞նչ միջոցներով է պահում դպրոցը			Դպրոցի տարեկան ծախքը			Ի՞նչ կրթական ցենզ ունի ուսուցիչը
Աղա-կաց	Էգակ.	Մուտքի տեսակները	Ռ.	Կ.	Ելքի տեսակները	Ռ.	Կ.	
40	16	ուխտատեղուց	70	—	երկու ուսուցչի			ուս. մինն աւար. է Ալ.
		մոմ եւ այլ մուտ.	90	—	վարձ	240	—	քաղ. պդ. միւսը՝ Ալ.
		վարելահողից	80	—	այլ ծախքեր	80	—	վիճակային դպրոցը
		Թոշակներից	80	—				
43	4	Թոշակներից	92	—	մի ուսուց. վարձ	115	—	ուսուցիչը հեռացել է
		պակներից	23	—		—	—	Ալ. քաղ. դպր. վերջին դասարանից
43	—	Թոշակներից	90	—	մի ուսուց. վարձ	90	—	Ալէքսանդրապոլի քաղաքային դպրոցից
		Թոշակներից			մի ուսուց. վարձ	150	—	ուսուցիչը սովորել է
33	—	եւ այլ մուտքեր	234	75	այլ ծախքեր	84	75	Ալէք. վիճակային դպ.
1268	241		9712	65		10123	25	

ՈՒՐՈՒԱԳԻԾ

Բացուելիք դպրոցների տեսակի, թուի, դասաբաշխութեան, դասագնի եւ այլ ծախքերի

ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՒ

Կազմած 1 սեպտեմբերի 1907 թ.

		Մէջտեղագ.	Երկդասեան գաւառական դպրոցներում	Երկդասեան միացեալ (Ս. Հ. Ն. Ն.)	Մի դասեան գաւառական դպրոցում	Միդասեան միացեալ (Ա. Ն., Գ. և Գ. բաժ.)	Շաբաթական	Քանի դասարան է	Շաբաթական գումարի Միջ. բաժ.	Շաբաթական գումարի Միջ. գաւառական դպրոցում	Դասագիրք	Դասագրքի գումարը
	Քանի հատ	2	7	11	35	37	30	—	—	—	—	—
Բացուելիք	Ա.	4	14	11	35	Միացած Բ. բաժ. հետ.	Միացած Բ. բաժ. հետ.	64	18	1152	20	23040
	Բ.	4	7	11	35	37	30	134	21	2604	20	29640
	Գ.	4	7	11	35	Միացած Գ. բաժ. հետ.	—	57	26	1482	20	52080
	Դ.	2	7	11	35	37	—	92	30	2760	20	55200
	Ե.	2	7	Միացած Զ. բաժ. հետ.	—	—	—	9	30	270	30	8100
	Զ.	2	7	11	—	—	—	20	30	600	30	18000
	Է.	2	—	—	—	—	—	2	30	60	40	2400
	Ը.	2	—	—	—	—	—	2	30	60	40	2400
Դասասենեակներ	Քանի դասարան	22	49	55	140	74	30	370	—	—	—	—
	Շաբաթ. դաս. թիւը	560	1211	1375	3325	1887	630	—	—	8988	—	—
	Գումար դասագնը	14800	28420	30800	66500	37740	1260	—	—	—	—	190860
Դպրոցական ծախքեր	Տեսուչ կամ Ա. ուս.	2000	2800	2200	3500	1850	—	—	—	—	—	12350
	Վերակացու	1600	1400	—	—	—	—	—	—	—	—	300
	Բարտուղ.	600	420	660	1850	925	—	—	—	—	—	4455
	Դիւանական ծախք	200	330	275	775	925	—	—	—	—	—	2505
	Մատենադարանպ.	400	420	—	—	—	—	—	—	—	—	820
	Մատենադարան	400	700	550	1750	1850	—	—	—	—	—	5250
	Ծառայ	800	700	1100	2100	1750	750	—	—	—	—	7200
	Ա.յլ և Ա.յլ	400	700	550	1750	1850	—	—	—	—	—	5250
	Վառելիք	1400	1470	1650	4200	2220	900	—	—	—	—	11840
Գումար	Դպրց. նախ.	22600	37360	37785	82425	49110	14250	—	—	—	—	243530

ՑՈՒՑԱԿ

Ալէքսանդրապոլի Փոխանորդութեան գիւղերի, աղդաբնակութեան, ունեցած դպրոցների և նոր բացուելիք դպրոցների [1])

№№ ըստ կարգի	ԳԻՒՂԻ ԱՆՈՒՆԸ	ԱԶԳԱՇՆՈՒԹԻՒՆ			Վիպական դպրոցներին	Դպրոցի տեսակը	Ծանօթութիւն
		Տների թիւը	Արական	Իգական			
	Գործակալութիւն Բոգեօխուշի						
1	Բոգեօխուշ	50	223	209	չունի	Շարժական	
2	Գիւլլի բուլաղ.	55	342	375	»	Միդասեան*)	
3	Ղայղուլի գիւղիք.	69	271	185	»	Շարժական	2 միդասեան
4	Ղզլղոշ	100	309	280	»	Միդասեան*)	5 շարժական
5	Ղուրդբուլաղ	44	142	120	»	Շարժական	
6	Նոր Ղզլքիլիսա	55	224	198	»	Շարժական	
7	Զիֆթալի	54	185	169	»	Շարժական	
		427	1696	1436			

1) Բոլոր տիպի դպրոցները ենթադրւում է երկու սեռի համար խառն։

Ծանօթ. *) Առաղանիշ միդասեան դպրոցները ենթադրւում են միացեալ դասարաններով 1 կամ առ առաւելն 2 ուսուցչի ղեկավարութեամբ, իսկ միւսները, որոնք գտնւում են 900 շնչից աւելի ունեցող գիւղերում՝ զատ բաժանմունքներով։

	Գործակալութիւն Զարլուի						
1	Ալիխան	34	212	186	չունի	Շարժական	
2	Բանդիւան	117	450	435	«	Միդասեան	
3	Գիւրջիեօլ	82	340	278	«	Միդասեան*)	
4	Թաքնալի	56	313	275	«	Միդասեան*)	
5	Իլի	120	418	295	»	Միդասեան*)	
6	Ճղխլար	142	600	507	»	Միդասեան	
7	Նոր-Բաշգիւղ	35	170	143	»	Շարժական	7 Միդասեան
8	Նոր-Զարաքիլիսա	65	271	264	»	Շարժական	6 Շարժական
9	Նոր-Սարիտար	80	257	240	»	Շարժական	
10	Զորլի	90	301	390	»	Միդասեան*)	
11	Զալապ	74	345	321	»	Միդասեան*)	
12	Սամուրլի	47	167	152	»	Շարժական	
13	Սալուտ	20	76	56	»	—	
14	Ֆէքլի	47	199	172	»	Շարժական	
		1009	4119	3704			
	Գործակալութիւն Օրբաֆիլիսայի						
1	Դարբանդ	69	274	226	չունի	Շարժական	
2	Ղոնախզռան	162	633	653	Միդ. ալրակ.	Միդասեան	

3	Կապս	78	292	239	չունի	Շարժական	
4	Թոփառլի	133	626	527	Միդաս. արակ.	Միդասեան	
5	Մեծ–Սարիար	97	388	375	Միդաս. Արակն.	Միդասեան*)	
6	Մեծ Քէյլթի	128	575	518	չունի	Միդասեան	7 Միդասեան
7	Նեբքին Ղանլիջա	75	289	234	Միդաս. Արկն.	Միդասեան	
8	Վերին Ղանլիջա	134	498	390	չունի		3 Շարժական
9	Երբորդ Արխվալի	86	367	354	»	Միդասեան*)	
10	Փոքր Քէյլթի	57	266	219	»	Շարժական	
11	Օրթաքիլիսա	94	429	394	»	Միդասեան	
		1113	4637	4129			

Գործակալութիւն Ջաչուրի

1	Աղքիլիսա	75	411	335	չունի	Միդասեան*)	
2	Դեալին Ղայա	26	115	95	»	—	
3	Դիրաքլար	125	580	542	»	Միդասեան	
4	Հաջինաղար	207	856	790	»	Երկդասեան	4 Երկդասեան
5	Դիւզքեանդ	255	955	966	Միդաս. արակ.	Երկդասեան	4 Միդասեան
6	Մ.–Քեափանակ	306	1067	910	չունի	Երկդասեան	—
7	Զրախլի	177	743	741	»	Միդասեան	

8	Ջաջուռ	202	881	785	Միդաս. խաուն	Երկդասեան	
9	Փ.-Քեսափանակ	100	358	361	չունի	Միդասեան	
		1473	5966	5525			

Գործակալութ. Մեծ-Պարնիի

1	Աղբուլաղ	135	690	653	չունի	Միդասեան	
2	Աւդիբէկ	205	703	701	»	Միդասեան	
3	Գեոյգեոխուշ	55	202	185	»	Շարժական	
4	Գեոլան	133	626	437	»	Միդասեան	
5	Թափանլի	93	396	385	»	Միդասեան	2 Երկդասեան
6	Ղալթաղչի	222	981	900	»	Երկդասեան	8 Միդասեան
7	Ղարաբոյա	109	500	426	»	Միդասեան	1 Շարժական
8	Ղարալ	165	762	645	»	Միդասեան	
9	Մեծ Պարնի	306	1477	1254	»	Երկդասեան	
10	Նալբանդ	134	576	592	»	Միդասեան	
11	Քիւլուչա	86	516	444	»	Միդասեան	
		1643	7429	6622			

	Գործակալութիւն Համամլուի						
1	Ագանդի	25	154	122	չունի	Շարժական	2 Երկդասեան 4 Միդասեան 1 Շարժական
2	Համամլու	444	1925	1621	Միդաս. խառն	Երկդասեան	
3	Ղաչաղան	81	556	430	չունի	Միդասեան	
4	Զիդդամլ.	104	569	480	»	Միդասեան	
5	Զոթուռ	57	342	328	»	Միդասեան*)	
6	Սիպիտակ	66	398	340	»	Միդասեան*)	
7	Որդնաւ	221	1084	923	»	Երկդասեան	
		997	5028	4244			
	Գործակալութ. Մ-Ղարեբիլիսայի.						
1	Բոզաւդալ	50	340	240	չունի	Միդասեան*)	1 Միջնակարգ 2 Երկդասեան 4 Միդասեան 2 Շարժական
2	Դարաբաղ	74	261	217	»	Շարժական	
3	Եաղուբլի	102	607	548	»	Միդասեան	
4	Համզաչիման	292	1345	1200	Միդաս. խառն	Երկդասեան	
5	Հաջիղարա	221	830	662	չունի	Միդասեան	
6	Ղշլաղ	154	858	818	Միդաս. խառն	Դրկդասեան	
7	Մեծ-Ղարաքիլիսա	607	1935	1827	Երկդ. երկսեռ	Միջնակարգ.	
8	Սարմուսախի	75	402	344	չունի	Միդասեան*)	
9	Վարդանլի	42	190	171	»	Շարժական	
		1617	6768	6027			

	Գործակալութիւն Նորաշէնի						
1	Ազուլա	67	337	271	չունի	Միդասեան*)	
2	Գեօզալդարա	99	382	358	»	Միդասեան*)	
3	Հաջի Խալիլ	74	307	295	»	Միդասեան*)	
4	Ղոլղաթ	116	482	405	»	Միդասեան*)	
5	Ղրխդագիլման	147	640	640	»	Միդասեան	1 Երկդասեան
6	Մեծ Արխվալի	186	782	748	Միդաս. խառն	Երկդասեան	9 Միդասեան
7	Մունջուխլի	100	358	344	չունի	Միդասեան*)	2 Շարժական
8	Նորաշէն	125	546	499	Միդաս. արակ.	Միդասեան	
9	Զանգի Թափա	37	172	151	չունի	Շարժական	
10	Փամփ	71	337	296	»	Միդասեան*)	
11	Փոքր Արխվալի	110	459	425	»	Միդասեան*)	
12	Քեշիշքեանդ	44	196	166	»	Շարժական	
		1176	4822	4598			
	Գործակալութիւն Արթիկու						
1	Արթիկ	369	1604	1394	չունի	Երկդասեան	1 Միջնակարգ
2	Բաշգիւղ	129	446	540	Միդաս. արակ.	Միդասեան	1 Երկդասեան
3	Եգեանլր.	147	639	580	չունի	Միդասեան	7 Միդասեան
4	Խաչաքիւլիսա	54	305	296	»	Միդասեան*)	1 Շարժական

5	Ղազանչի	151	581	545	չունի	Միդասեան	
6	Ղասմալի	79	267	270	»	Շարժական	
7	Ղուլիջան	86	315	316	»	Միդասեան*)	
8	Ղփչաղ (Հռ. ՁՔ.)	85	419	351	Երկդ. խառն	Միջնակարգ	
9	Մեջիտլու	167	715	621	չունի	Միդասեան	
10	Փոքր Պարնի	213	753	676	»	Միդասեան	
		1479	6144	5579			
	Գործակալուք Հռոմի						
1	Բայինդուր	112	461	434	չունի	Միդասեան*)	
2	Դահարլի	123	428	426	Միդաս. խառն	Միդասեան*)	
3	Թալիբօղլի	79	256	232	չունի	Շարժական	
4	Թոմարդաշ	113	430	377	»	Միդասեան*)	3 Երկդասեան
5	Իլխիաբի	201	824	705	»	Միդաս.	6 Միդասեան
6	Իմրխան	113	529	533	»	Միդաս.	
7	Խլի–Ղարքիլիսիա	430	1518	1408	Միդաս. խառն	Երկդասեան	2 Շարժական
8	Հոռոմ	313	1191	1077	»	Երկդաս.	
9	Ղափուլի	221	908	846	չունի	Երկդասեան	
10	Ղութնիղշաղ	27	101	106	»	—	
11	Ճլովխան	96	358	295	»	Միդասեան*)	
12	Քեալալի	58	247	235	»	Շարժական	
		1886	7251	6674			

	Գործակալութիւն Մահմուտչուղի						
1	Արմուդլի	107	386	370	չունի	Միդասեան*)	
2	Բողազքեասան	162	520	456	»	Միդասեան	
3	Զիթիհանքով	146	428	365	»	Միդասեան*)	
4	Մահմուտչուղ	242	939	862	Միդաս. արակ.	Երկդասեան	3 Երկդասեան
5	Մօլլադեօգչայ	200	732	711	չունի	Միդասեան	5 Միդասեան
6	Շիրվանլուղ	246	961	910	»	Երկդասեան	2 Շարժական
7	Սարիբաշ	46	225	173	»	Շարժական	
8	Օգիւթլու	370	1554	1407	»	Երկդասեան	
9	Օնգիւրլի	127	504	435	»	Միդասեան	
10	Փիրթիքեան	57	189	186	»	Շարժական	
		1703	6438	5875			
	Գործակալութ. Տաւշանիշլաղի						
1	Աղին	172	568	509	չունի	Միդասեան	
2	Բաբուլի	79	330	314	»	Շարժական	
3	Բուղդաշէն	55	178	181	Միդաս. արակ.	Միդասեան*)	9 Միդասեան
4	Բոզդողան	171	582	526	չունի	Միդասեան	4 Շարժական
5	Ենիքոյ	44	166	165	»	Շարժական	
6	Զառնջի	69	273	245	»	Շարժական	

7	Ղազարապատ	75	359	326	չունի	Միդասեան
8	Ղզբիլասա	161	609	572	»	Միդասեան
9	Ղեղաճ	72	219	196	»	Շարժական*)
10	Նոր—Արթիկ	101	415	417	»	Միդասեան*)
11	Զրփլի	125	380	306	»	Միդասեան*)
12	Սուանվերդի	150	681	616	»	Միդասեան
13	Տաւշանղլաղ	157	520	502	»	Միդասեան
		1431	5310	4875		

ԳՈՒՄԱՐ

Գիւղերի թիւը—125
Տնեարի թիւը—15944
Շունչ արական—65610
» իգական—59288
Միջնակ-դպրոց—2
Երկդասեան—18
Միդասեան—72 (36—36)
Շարժական—30

ՅՈԲԵԼԵԱՆՆԵՐ.

«ԱՂԲԻՒՐԻ» 25 ԱՄԵԱԿԸ:
1883—1908.

Ութսունական թուականը մեր դպրոցների ամենածաղկեալ ժամանակն էր, երբ բոլոր քիչ թէ շատ խոշոր գիւղերում գրեթէ դպրոցներ ունէինք, երբ հայ ընտանիքներում սկսել էին հայերէնով հետաքրքրուել և հայերէն գրուածներ կարդալ, պակասում էին մանուկների հոգուն ու սրտին մատչելի մանկական հրատարակութիւններ և ահա 1883 թուին մի խումբ երիտասարդներ թիֆ-